«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

ԱՌԱՐԿԱ՝ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԵՂԻՆԱԿ՝ ՓՈՒՆՁՈ ՂԱԶԱՐՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ԾԱՂԿՈՒՆՔԻ ԲԱՑ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 2

Դաստիարակությունը որպես օբյեկտիվ երևույթ, դպրոցի և ընտանիքի դերը երեխայի դաստիարականության գործում 6

Ծնող-ուսուցիչ համագործակցությունը, դպրոցի և ընտանիքի 10

համագործակցության ոլորտում առկա խոչընդոտները և այդ խոչընդոտների հաղթահարման ուղիները 10

Սոցիոլոգիական հարցման արդյունքների ամփոփում և վերլուծություն 18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 22

ԱՄՓՈՓՈՒՄ 23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 24

Ներածություն

Թեմայի կարևորությունը և արդիականությունը:

<< Սովորական ուսուցիչը պատմում է: Լավ ուսուցիչը բացատրում է: Բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս: Հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է:>> Ուիլյամ Ուորդ

<< Ինչու՞ ես ատեմ երեխային այսօրվա վատի համար, ես նրան կսիրեմ այն լավի համար, ինչը նրա մեջ դաստիարակելու եմ վաղը>>: Վ. Ա. Սուխոմլինսկի

Ցանկացած օգնություն պետք է լինի չափավոր, միտում չունենա ամեն ինչ երեխայի փոխարեն անելու, այլ ընդհակառակը՝ նպաստի նրա մոտ նոր հմտությունների ձևավորմանը և զարգացմանը, դրանք նոր և տարբեր իրավիճակներում կիրառելուն՝ աստիճանաբար նվազագույնի հասցնելով աջակցությունը և խթանելով ինքնուրույնությունը:

«Երեխաները բոլոր տեսակի բռնություններից պաշտպանված լինելու իրավունք ունեն». Այս դրույթը սահմանված է ՄԱԿ-ի երեխաների իրավունքների մասին կոնվենցիայում: Խոսելով ընտանեկան դաստիարակության կարևորության մասին Վ. Սուխոմլինսկին նշում է, որ ընտանիքը այն առաջին միջավայրն է, ուր մարդը պիտի սովորի բարիք գործել:

Յուրաքանչյուր անձի ձևավորման, ֆիզիկական և մտավոր զարգացման գործընթացում ընտանիքը, ծնողներն ունեն անփոխարինելի դեր. այս միջավայրում է տեղի ունենում երեխայի առաջնային սոցիալականացումը, ձևավորվում դերային և վարքագծային կարծրատիպերը, արժեքային կողմնորոշումներն ու աշխարհայացքը: Առաջին հերթին ծնողներն են հոգ տանում երեխայի անվտանգության, կարիքների մասին, կրթում ու դաստիարակում նրան, հոգեբանական աջակցություն ու հարմարավետություն ապահովում: Հետևաբար՝ բարդույթներից զերծ, հոգեբանորեն կայուն, հասարակության պահանջներն ընկալող և դրանց համարժեք արձագանքելու ունակ անձի ձևավորման առաջնային նախադրյալը բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ ու հոգեբանական և սոցիալական խնդիրները հաղթահարելու կարողություններ ունեցող, դաստիարակչական և սոցիալականացման գործառույթներ իրականացնող, երեխայի իրավունքները, նրա հանդեպ պարտականությունները գիտակցող և դրանք կյանքի կոչող ընտանիքի առկայությունն է:

Ազնվությունը, մարդասիրությունը, բարությունը, կենցաղային խնդիրներին դիմագրավելու կարողությունը ձևավորվում են միայն այն դեպքում, երբ երեխան

մանկուց ականատես է եղել անկեղծ ու ջերմ մարդկային հարաբերությունների: Սրանով անկախությունից հետո խառնաշփոթ առաջացավ հասարակության արժեքային համակարգում. անցյալից կտրուկ հրաժարումը դեռևս երաշխիք չէր իրական առաջընթացի: Խոսքի ազատությանը, բազմակարծությանը, բազմակուսակցական համակարգին զուգահեռ աճեց գործազրկությունը, աղքատությունը, օրինազանցությունը, կոռուպցիան, արտագաղթը, սոցիալական բևեռացումը, որոնք հանգեցրին իրավիճակի էլ ավելի բարդացմանը: Բնականաբար ընտանիքն այս ամենից զերծ չէր կարող մնալ: Ազգի հիմքը հանդիսացող ավանդական ընտանիքը, ուր դաստիարակվում է մատաղ սերունդը կրեց որակակն փոփոխություններ: Տեղին է մեջբերել Գ Հարությունյանի դիտարկումը, ըստ որի նախորդ դարավերջի համակարգային փլուզումներն առաջ են բերել հասարակական կեցության այնպիսի վիճակ, որին բնորոշ են անկայունությունը, անորոշությունը, արժեհամակարգային շփոթը, իռացիոնալի ակտիվացումը, գործընթացների աննախադեպ միջազգայնացումը և այլն: Սա էլ հանգեցրեց նրան, որ շատ ծնողներ սկսեցին աշխատել գերծանրաբեռնված աշխատանքային գրաֆիկով, կամ էլ համալրեցին գործազուրկների բանակը. երկու դեպքում էլ բարդացնելով երեխայի դաստիարակության գործընթացը և հիմնական բեռը թողնելով պետական հաստատությունների վրա: Մինչդեռ տեղեկատվական, ինֆորմացիոն զարգացման արդի մակարդակում գտնվող հասարակության համար չափազանց արդիական է նոր ձևավորվող քաղաքացուն օգնել հաղթահարել արժեքային այն բախումը, որն առաջանում է թվային ու իրական աշխարհների տարբերություններից: Սա կարծում ենք ընտանիք-պետություն և հասարակական այլ ինստիտուտների գործուն համագործակցությամբ կարող է միայն կյանքի կոչվել, ինչն էլ հենց պայմանավորում է հետազոտական թեմայի արդիականությունը:

Աճող սերնդի դաստիարակությունը, յուրաքանչյուր պետության կարևորագույն խնդիրներից մեկն է, և մեր հանրապետությունում այն իրականացվում է պետական մակարդակով՝ սկսած նախադպրոցական ուսումնական հաստատություններից, մինչև՝ մասնագիտական կրթություն: Այս կարևոր առաքելության գործում, բնականաբար, իր անփոխարինելի դերն ունի նաև ընտանիքը:

Հետազոտական աշխատանքի նախնական վարկածն այն է, որ այսօր ընտանիքների մեծ մասը, տարված գերզբաղված առօրյայով ու ընտանեկան հոգսերով, չի զբաղվում իրենց երեխաների դասապատրաստմամաբ ու ուսումնական գործընթացով, լավագույն դեպքում սահմանափակվում է մասնավոր դասապատրաստման պարապմունքներով, ընտանիք-դպրոց համատեքստում չի իրագործվում երեխաների կրթա-դաստիարակչական գործունեությունը:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացում ընտանիք-դպրոց համագործակցության առանձնահատկությունները և տալ համապատասխան առաջարկություններ այդ գործընթացը բարելավելու համար:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են.

Ուսումնասիրել դպրոցի և ընտանիքի դերը երեխայի դաստիարականության գործում, Քննել ծնող-ուսուցիչ համագործակցությունը, պրոցի և ընտանիքի համագործակցության ոլորտում առկա խոչընդոտները և այդ խոչընդոտների հաղթահարման ուղիները:

Դաստիարակությունը որպես օբյեկտիվ երևույթ, դպրոցի և ընտանիքի դերը երեխայի դաստիարականության գործում

Դաստիարակություն, որոշակի տեխնոլոգիաների համակարգ է, որն ուղղված է երեխայի անձի նպատակաուղղված ձևավորմանը՝ հասարակական, արտադրական, մշակութային կյանքին նախապատրաստելու համար։ Դաստարակությունը իրականացվում է ընտանիքի, նախադպրոցական ուսումնական հաստատությունների, դպրոցների, արտադպրոցական, երիտասարդական խմբակների և այլնի համատեղ ջանքերով։

Դաստիարակությունը հասարակական կյանքի կազմակերպման համընդհանուր անհրաժեշտ կատեգորիա է, որ սերտորեն կապված է ուսուցման հետ։ Դաստիարակության առաջնային օղակը, որտեղ ձևավորվում է մարդը իր գոյության առաջին իսկ պահից, ընտանիքն է, որին հետ համագործակցում ու գործը <<շարունակում>> են հասարակական մյուս ինստիտուտները՝ դպրոց, հասարակական, երիտասարդական կազմակերպություններ և այլն։

Ըստ էության դաստիարակության բովանդակությունը, մեթոդներն ու ձևերը պատմականորեն պայմանավորված են հասարակարգի առջև ծառացած խնդիրներով և շահերով։ Նրա նպատակներն ու խնդիրները որոշվում են հասարակական հարաբերություններով։

Դաստիարակության տեսությունն ուսմունք է դաստիարակության երևույթների, փաստերի, դրանց արտաքին ու ներքին կապերի, դաստիարակության սկզբունքների ու մեթոդների, դաստիարակության բովանդակության ու օրինաչափությունների, դաստիարակության կազմակերպման ձևերի մասին։

Դաստիարակության պրոցեսում նոր սերունդները պետք է յուրացնում է նախորդների կողմից ստեղծված փորձն ու գիտելիքը, տիրապետում է որոշակի կարողությունների, յուրացնում հասարակության վարքային նորմերն ու փորձը և մշակում կյանքի մասին հայացքների որոշակի համակարգ։

Յուրաքանչյուր անձի ձևավորման, ֆիզիկական և մտավոր զարգացման գործընթացում ընտանիքը, ծնողներն ունեն անփոխարինելի դեր. այս միջավայրում է տեղի ունենում երեխայի առաջնային սոցիալականացումը, ձևավորվում դերային և վարքագծային կարծրատիպերը, արժեքային կողմնորոշումն ու աշխարհայացքը։

Առաջին հերթին ընտանիքն է հոգ տանում երեխայի անվտանգության, կարիքների մասին, կրթում ու դաստիարակում նրան, հոգեբանական աջակցություն ցուցաբերում, հարմարավետություն ու ապահովություն տալիս անձի ֆիզիկական ու հոգեբանական զարգացման համար: Ազնվությունը, մարդասիրությունը, բարությունը, կենցաղային խնդիրներին դիմագրավելու կարողությունը ձևավորվում են միայն այն դեպքում, երբ երեխան մանկուց ականատես է եղել անկեղծ ու ջերմ մարդկային հարաբերությունների, ինչը ակնկալվում է ընտանիքում:

Իսկ ընտանիքում առկա սոցիալտնտեսական եւ հատկապես հոգեբանական բնույթի խնդիրները՝ ծնողների անտարբերությունը միմյանց և երեխաների նկատմամբ, ձևական բնույթ կրող՝ «հանուն երեխայի» հարաբերությունները, հաճախակի կրկնվող վիճաբանությունները, հանդուրժողականության պակասով պայմանավորված՝ «սերունդների կոնֆլիկտը», բռնությունը հանգեցնում են անչափահասի կողմից շեղվող, իսկ առանձին դեպքերում՝ հանցավոր վարքագծի դրսևորման:

Դաստիարակության պրոցեսի մանկավարժական ղեկավարումն ամենից առաջ ուղղված է այն բանին, որ ընտանիքում և հասարակության մեջ ևս շարունակվի և ամրապնդվի այն, ինչ անում է դպրոցը՝ ձևավորելով երեխայի աշխարհայացքը: Ահա այստեղ է ուսուցչի աշխատանքի անգնահատելի դերը, եթե այն կազմակերպված է գրագետ և ունի մոտեցման ճիշտ ձև: Վերջինս առանձնակի մեծ դեր է կատարում ապագա սերնդի դաստիարակության բարդ ու պատասխանատու գործում՝ դպրոցի, ընտանիքի ու հասարակության ջանքերը համախմբելու ուղղությամբ: Ուսուցչի՝ առավել ևս դասղեկի, կարևորագույն խնդիրը հասարակությանը երեխաների դաստիարակությանը մասնակից դարձնելն է: Նպատակահարմար է դպրոցում մշտապես կազմակերպելու ծնողական ժողովներ, հանդիպումներ, խորհրդատվություններ, տարբեր հետաքրքրաշարժ միջոցառումներ, աշխատանքներ, որոնք կնպաստեն երեխաների դաստիարակությանը՝ նրանց ուսումնական յուրաքանչյուր օրը դարձնելով տոն:

Դա ևս կնպաստի, ավելի կխորացնի ու կամրապնդի ընտանիք-դպրոց կապը: Բացի այդ, անհրաժեշտ են ծնողների և երեխաների համատեղ ստեղծագործական, մասնագիտական կողմնորոշման հարցերի հետ կապված հանդիպումների

կազմակերպումը՝ նվիրված ընտանեկան լավագույն ավանդույթների, սովորությունների ներկայացմանը՝ հաճախ մասնագիտական ընտրության բարդ և կարևոր խորհրդատվության առաքելությունը դնելով աշակերտների ծնողների վրա:

Թող որ երեխան ծանոթանա ծնողի ընտրած մասնագիտության առավել ու դժվար կողմերին, կողմնորոշվի իր իսկ ընտրության մեջ, ոչ թե պարտադրվի՝ կրելով ծնողի նախասիրությունները:

Ունենալով չափազանց կարևոր ու անգնահատելի պատասխանատվություն կրող աշխատանք՝ դասղեկը պարտավոր է ստեղծել և հաջողությամբ կիրառել ընտանիքի և հասարակայնության հետ նրանց աշխատանքի բազմազան ձևեր: Իսկ այսօրվա դեռահասների ճիշտ դաստիարակությունը շատ հարցերում պայմանավորված է նրանց իսկ ծնողների հետ տարվող աշխատանքների որակից: Այսինքն Ադլիրի խոսքով ասած՝

<<Ընտանիքը փոքրիկ հասարակություն է, որի ամբողջականությունից է կախված մարդկային ամբողջ մեծ հասարակության անվտանգությունը>>: Կարգապահության լավագույն դպրոցը ընտանիքն է, որի գլխավոր իմաստն ու նպատակը երեխաների դաստիարակությունն է:

Իսկ երեխաների դաստիարակության գլխավոր դպրոցը ծնողների փոխհարաբերություններն ու վերաբերմունքն է միմյանց նկատմամբ:

Ուստի, անձնական շատ դժբախտությունների արմատները թաղված են հենց այնտեղ, ուր ծնողները երեխային մանկությունից չեն սովորեցրել ղեկավարել սեփական ցանկությունները, չեն սովորեցրել ճիշտ վերաբերվել <<կարելի է>>, << չի կարելի>>, <<հնարավոր է >>, հասկացություններին:

Հաճախ ընտանեկան դաստիարակության շատ անհաջողություններ բացատրվում են ծնողների անբավարար մանկավարժական գրագիտության և երեխաների դաստիարակության համար ծնողների անհրաժեշտ փորձի բացակայությամբ: Ուստի, դպրոցի գերխնդիրն է՝ օգնել ծնողներին գտնելու երեխաների դաստիարակության այնչափ կարևոր ուղին:

Հասարակական կազմակերպությունները առավել ուշադրության են արժանացնում դպրոցից հետո դպրոցականների անխնամությունը հաղթահարելու ուղղությամբ:

Ըստ անհրաժեշտության՝ կազմակերպվում են արշավներ, ճանաչողական բնույթի բազմաբովանդակ էքսկուրսիաներ, բնակավայրի պատմամշակութային արժեքների հետ ծանոթություններ և այլ բնույթի հետաքրքիր աշխատանքներ:

Սերտ կապի մեջ մտնելով հասարակության ու ընտանիքի հետ՝ ժամանակակից դպրոցը զգալի չափով ընդարձակում իր իսկ կողմից կազմակերպված դաստիարակչական ներգործության ոլորտը:

Այսպիսով, սովորողների նկատմամբ տարվող դաստիարակչական համալիր գործունեությունը, որ իրականացվում է դպրոց-ընտանք ինստիտուտների ջանքերով արժեքահեն դաստիարակության, անձի ճիշտ ձևավորման ու զարգացման լայն հնարավորություններ է ընձեռում:

Հենվելով մանկական կոլեկտիվի վրա, դասարանում դասավանդող բոլոր ուսուցիչների համագործակցության վրա, մասնակից դարձնելով աշակերտների ծնողներին ու հասարակությանը՝ դպրոցը կարող է լուրջ ներդրում կատարել՝ հոգեկան հարստությունը, բարոյական անաղարտությունն ու ֆիզիկական կատարելությունը իր մեջ հարմոնիկ կերպով զարգացնող նոր քաղաքացու ձևավորման գործում:

Ծնող-ուսուցիչ համագործակցությունը, դպրոցի և ընտանիքի համագործակցության ոլորտում առկա խոչընդոտները և այդ խոչընդոտների հաղթահարման ուղիները

Ընտանիքն ու դպրոցը մանկության և պատանեկության ընթացքում անհատականության սոցիալականացման երկու հիմնական և հավասար սուբյեկտներ են: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Խոսելով դպրոցի և ընտանիքի փոխհարաբերությունների մասին 'առաջին հերթին կարևոր է նշել, որ դրանք պետք է հիմնված լինեն փոխկապակցման, կրթական գործունեության փոխլրացման սկզբունքների վրա:

Ուսուցչի և աշակերտների միջև փոխգործակցության արդյունավետությունը կրթական գործունեության գործընթացում մեծապես կախված է ուսուցչի' ծնողների հետ համագործակցությունից: Ծնողների հետ շփման գործընթացում է, որ ուսուցիչը գիտակցում է իր դերը երեխայի դաստիարակության գործում:

Ծնողների հետ համագործակցությունը թույլ է տալիս ավելի լավ ճանաչել երեխային, նայել նրան տարբեր տեսանկյուններից և ճանաչել երեխայի ներաշխարհը:

Ուսուցիչ-ծնողները հարաբերությունները հաջողված են, եթե նրանք միասին փորձում են գտնել ամենաարդյունավետ ուղիները, որոշել մանկավարժական կրթության բովանդակությունն ու ձևերը:

Ծնողների ու մանկավարժների վերջնանպատակը նույնն է' հաջողել երեխայի աշխարհայացքի ձևավորման, դաստիարակության անչափ պատասխանատու գործում: Նման արդյունք, իհարկե, կարող է լինել, երբ նրանք դաշնակիցներ դառնան: Այս միությունը հիմնված է ձգտումների միասնության, կրթական գործընթացի վերաբերյալ տեսակետների, համատեղ մշակված ընդհանուր նպատակների և խնդիրների, նախատեսված արդյունքին հասնելու ուղիների վրա:

Ֆրանսիացի պատմաբան Լամարտինը ասում է. «Մտքի ուսուցիչը դպրոցում է, հոգու ուսուցիչը՝ ընտանիքի ծոցում», ուստի ամենալավ, սոցիալական կրթությունը դպրոց-ընտանիք կրթությունն է:

Ուսուցիչներն ու ծնողները, որպես դաստիարակության գործընկերներ, պետք է լրացնեն միմյանց, ունենան փոխադարձ հարգանք և վստահելի հարաբերություններ: Ծնողները պետք է իրենց երեխաներին սովորեցնեն ընկալել կյանքը որպես ամենամեծ արժեք: Ծնողները իրենք պետք է սովորեն լսել և լսել իրենց երեխաներին, հասկանալ միմյանց:

Ուսուցիչը պետք է ծնողների մոտ դրական վերաբերմունք ձեւավորի իրենց երեխաների ուսուցման, դաստիարակության և զարգացման խնդրի նկատմամբ, ճիշտ պարզի անախորժության պատճառը և ընտրի ծնողների հետ աշխատելու առավել արդյունավետ ձևերն ու մեթոդները՝ ուղղված դաստիարակչական մտքի բարելավմանը, ծնող-երեխա անախորժությունների հաղթահարմանը:

Ծնողական համայնքի հետ աշխատանքները ներառում են. ծնողական սեմինարներ, խմբային և անհատական խորհրդատվություն, ծնողական հանդիպումներ, ծնողական համաժողովներ, գործնական աշխատանքներ, դպրոցական ու արտադպրոցական դասերին մասնակցություն և այլն:

Երեխայի կրթության դաստիարակության արդյունավետությունը ուղիղ համեմատական է դպրոցի և ընտանիքի փոխգործակցությանը: Ուսուցիչները առաջատար դեր են խաղում դպրոցի և ընտանիքի միջև համագործակցության կազմակերպման գործում: Նրանց աշխատանքի արդյունքում է, որ որոշվում է, թե ընտանիքները որքանով է գիտակցաբար մոտենում երեխաների դաստիարակությանն ու կրթությանը և այս հարցերում դպրոցի վարած քաղաքականությանը ու մասնակցում դրա իրականացմանը:

Ինչպես արդեն նշեցինք ոչ դպրոցը, ոչ ընտանիքը առանձին-առանձին չեն կարող ապահովել երեխայի անհատականության վրա ազդող գործոնների բազմազանությունը:

Այդ պատճառով դաստիարակության ամբողջական,սիստեմատիկ գործընթացը ենթադրում է շահագրգիռ կողմերի ջանքերի համատեղում: Դպրոցի և ընտանիքի համագործակցության գլխավոր պայմանը միմյանց գործառույթների և

գործունեության բովանդակության ամբողջական ընկալումն է10: Ցավոք այսօր դպրոց-ընտանիք համագործակցության ոլորտում կան բավականին լուրջ խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է անհատական, համակարգված ու շարունակական աշխատանք, որը հիմնականում պետք է տարվի ուսումնական հաստատության կողմից:

Քննարկվող հարաբերությունների հաջող իրացումը խոսում է իրականացնող մանկավարժի մասնագիտական հմտությունների մասին:
Յուրաքանչյուր ընտանիք տարբերվում է մյուսներից իր կառուցվածքով, խնդիրներով, ավանդույթներով, սովորություններով, հետաքրքրություններով, արժեքներով, բարքերով, կրթության տարբեր հնարավորություններով: Յուրաքանչյուր դպրոց նման է մյուսներին ընդհանուր ռազմավարությամբ, կրթական ծրագրերով, արժեքային համակարգով:

Այժմ մեր հասարակությունը գտնվում է արժեքային բախման փուլում, որտեղ մի կողմից սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, հասարակության շերտավորումը, աշխատանքային երկարատև գերծանրաբեռնված օրը, մյուս կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ժամանակակից պայմանները անջրպետ են ստեղծում ծնող –երեխա, ծնող-դպրոց- երեխա հարաբերություններում:

Սոցիալ-մանկավարժական և հոգեբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ ընտանեկան դաստիարակության' հարգանքի և վստահության վրա հիմնված ոճերը, ծնողների հեղինակությունը, ընտանիքում երեխայի հետ շփման առանձնահատկությունները նպաստում են ներընտանեկան կապերի ամրապնդմանը, բարոյական բարձր պատասխանատվության մթնոլորտի, փոխօգնության ավանդույթների ձևավորմանը: Ընտանիքը եղել և տեսանելի ապագայում էլ կլինի աճող սերնդի դաստիարակության հիմքը:

Ծնողների հետ շփման ժամանակի սղությունը, փոխգործակցության սահմանափակումը, ընտանեկան դաստիարակության ավտորիտար ոճը ընտանիքում բարոյահոգեբանական և հուզական հարաբերությունների քայքայման պատճառ են դառնում, մինչդեռ դրանք ընտանեկան դաստիարակության արդյունավետության հիմնական այն պայմաններն են, որոնք անհրաժեշտ են երեխայի բնականոն զարգացման համար, և որոնց բացակայությունը հանգեցնում ներընտանեկան հարաբերությունների ճգնաժամի, օտարացման և սերունդների միջև կյանքի իմաստաձևավորող կապերի ընդհատման: Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների արդի զարգացումներում երեխաներն ունեն հաղորդակցման մեծ հնարավորություններ, որը դպրոցի և համայնքի համագործակցության ուղիների ու ձևերի վերանայման անհրաժեշտություն է ծնում: Արդիական են դառնում համայնքի' ընտանիքների, կրթական հաստատությունների փոխգործակցության ուղիների և ձևերի որոշակիացումը, նախագծումը, այդ գործընթացի արդյունքների վերլուծությունն ու ընդհանրացումը երեխայի անձի զարգացման համատեքստում: Այսօր առկա է օբյեկտիվ հակասություն' կապված

- ✓ երեխաների և ծնողների շփման,
- ✓ ծնողների' դաստիարակության բնագավառի վերաբերյալ հստակ գիտելիքների ոչ բավականաչափ ձևավորվածության,
- ✓ երեխայիհամար միասնական դաստիարակչական միջավայր ստեղծելու և արհեստականորեն այդ միջավայրը դպրոցական ու ընտանեկան միջավայրի բաժանելու միջև,
- ✓ ներընտանեկան փոխգործակցության' ծնողների ու երեխաների համատեղ գործունեության միջոցով ընտանիքի պահպանման ու ամրապնդման և համագործակցության առումով մանկավարժական կոլեկտիվի կողմից ծնողներին հոգեբանական աջակցության անհրաժեշտության և մանկավարժական լուսավորության ապահովման գիտամեթոդական հիմունքների, մեթոդիկայի և աշխատանքի արդյունավետ ձևերի անբավարար մշակվածության միջև:

Թվարկված խնդիրները այժմ հանդիսանում են դպրոց-ընտանիք հարաբերությունների ու համագործակցության խաթարման գլխավոր պատճառները: Ծնողների' կրթության գործընթացին ներգրավվածության ոլորտում եղած հիմնխնդիրների լուծման ուղիները կարծում ենք կարող են լինել հաղորդակցման բարելավում

1. ծնողների ներգրավվածության նշանակության մասին դպրոցի աշխատակազմի և ընտանիքի գիտակցության բարձրացումը,
2. շփումների անհատականացումը:

- Ծնողների հետ աշխատելու առավել տարածված ձևերն են՝
- համադպրոցական, դասարանական ծնողական ժողովները.
- դպրոցականի տուն կատարվող այցերը,
- ծնողներին դպրոց հրավիրելը,
- աշխատանքը ծնողական ակտիվի հետ,
- անհատական զրույցները և խորհրդատվությունները ծնողների համար,
- ծնողական համալսարանները, կոնֆերանսները և
- երեխաների դաստիարակության լավագույն փորձի փոխանակումը,
- ծնողների մանկավարժական լուսավորությունը,
- դպրոցի կապը այն հիմնարկների հետ, որտեղ աշխատում են ծնողները,
- աշակերտական գործերի, հատկապես ձեռքի
- աշխատանքների ցուցահանդեսների կազմակերպումը:

Կարծում ենք այս դրույթների համալիր և պարբերական կիրառումը, էականորեն կնպաստի դպրոց-ծնող համագործակցային մթնոլորտի բարելավմանը:

Այժմ գործում է Emis.am կրթական ծրագիրը, որի նպատակն է դյուրացնել ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը, ինչպես նաև ամրապնդել որակյալ կրթության անհրաժեշտության և կարևորության գաղափարը, բացահայտել ու խրախուսել աշակերտներին ներդպրոցական, միջդպրոցական և համահայկական ինտելեկտուալ մրցույթների, խաղերի միջոցով ձևավորել աշակերտների, ծնողների և ուսուցիչների հաղորդակցման հատուկ համակարգ և բարձրացնել դպրոցների գործունեության թափանցիկությունը:

Բացի այդ առաջարկում ենք հետաքրքիր հանդիպումներ, խաղային էքսկուրսիաներ, բացօթյա սեմինար-քննարկումներ ու փորձի փոխանակման ցերեկոներ կազմակերպել ծնողների հետ: Սա կարծում ենք հնարավորություն կընձեռի բարձրացնել անհատական աշխատանքների որակը, փոխօգնության ու փոխգործակցության մթնոլորտ կստեղծի:

Դպրոց-ընտանիք համագործակցությունն աճող սերնդի կրթության և դաստիարակության ընդհանուր համակարգի մասն է: Այս համակարգում կարևոր տեղ են գրավում ծնողները, որոնք երեխաների ֆիզիկական դաստիարակության գործընթացում գլխավոր մասնակիցներ են, կազմակերպիչներ և առավել շահագրգիռ կողմ: Նրանց դիրքորոշումից է կախված այդ գործընթացի արդյունավետությունը:

Ծնողներին այդ գործընթաց ներգրավելու համար անհրաժեշտ է կատարել մեծ բացատրական, քարոզչական, կազմակերպչական աշխատանք: Այս գործառույթն իր վրա պետք է վերցնի դպրոցի մանկավարժական կոլեկտիվը' տնօրինության ակտիվ մասնակցությամբ, ինչպես նաև ողջ պետական ապարատը' ներառյալ հեռուստատեսություն ու լրատվության զանգվածային միջոցներ:

Շատ հաճախ կարելի է կարծիք լսել, որ ամեն ինչ ընտանիքից է գալիս: Դա իսկապես այդպես է: Բնավորության հիմնական գծերը կա՛մ գենետիկորեն դրված են, կա՛մ ձևավորվում են մանկության տարիներին ծնողների ազդեցության տակ: Բայց դա չի նվազեցնում դպրոցի դերը անհատի ձևավորման և դաստիարակության գործում: Այն սերմերը, որոնք ցանվել են ծնողների կողմից, կարող են հավասարապես սատկել կամ բողբոջել դպրոցական միջավայրում՝ դասարանի թիմի, ուսուցիչների և դասղեկի ազդեցության տակ: Այսօր առավել քան արդիական է այն ձևակերպումը, որ կրթությունը ամենաբարդ սոցիալական գործընթացներից է:

Դպրոցն առաջարկում է աշխատանքի հետևյալ տեսակները.

- կրթական — ծնողներին սովորեցնել տեսնել և հասկանալ իրենց երեխաների հետ տեղի ունեցող փոփոխությունները,
- խորհրդատվական՝ սոցիալական և աշխատանքային հմտությունների ձեռքբերման գործընթացում երեխայի վրա արդյունավետ համատեղ հոգեբանական և մանկավարժական մեթոդների որոնում:

Դպրոցի և ընտանիքի փոխազդեցության էությունն այն է, որ երկու կողմերն էլ պետք է շահագրգռված լինեն ուսումնասիրել երեխային, բացահայտել և զարգացնել նրա մեջ լավագույն որակներն ու հատկությունները: Նման փոխգործակցությունը հիմնված է փոխադարձ վստահության և հարգանքի, փոխադարձ աջակցության և օգնության, միմյանց նկատմամբ համբերության և հանդուրժողականության սկզբունքների վրա: Դա կօգնի ուսուցիչներին և ծնողներին համատեղել իրենց ջանքերը՝ երեխայի մեջ ստեղծելու այն որակներն ու հատկությունները, որոնք անհրաժեշտ են նրա ինքնորոշման և ինքնիրացման համար, հաղթահարելու դժվարությունները և ձախողման դեպքում ինքնավերականգնումը:

Ընտանիքի հետ ուսուցիչների համագործակցության բնույթը կախված է ծնողների դիրքորոշումից, ովքեր տարբեր վերաբերմունք ունեն դպրոցի, կրթության նկատմամբ, տեսնում են իրենց դերը դպրոցում և դասարանում դաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում, տարբեր ձևերով դաստիարակում են երեխային ընտանիքում և ունեն տարբեր ինտելեկտուալ մակարդակ: Հետևաբար, անհրաժեշտ է ընտանիքների և ծնողների հետ աշխատանքը կառուցել տարբերակված ձևով՝ չպարտադրելով բոլորին համագործակցության նույն ձևերը, այլ կենտրոնանալով ծնողների կարիքների, ընտանիքի և ընտանեկան կրթության առանձնահատկությունների վրա՝ համբերատար ներգրավելով նրանց աշխատանքի մեջ: Կան խնդիրներ, որոնք հուզում են բոլոր ծնողներին կամ կապված են դասարանի երեխաների կրթական գործունեության հետ: Նման հարցերը քննարկվում են ընդհանուր ժողովներում:

Ծնողական ժողովները մտերմացնում են ուսուցիչներին և ծնողներին, ընտանիքին մոտեցնում դպրոցին, օգնում են որոշել երեխայի վրա կրթական ազդեցության ամենաօպտիմալ ուղիները: Հանդիպումների ժամանակ ծնողները համակարգված կերպով ծանոթանում են ընտանիքում և դպրոցում երեխաներին դաստիարակելու և կրթելու նպատակներին և խնդիրներին, բովանդակությանը, ձևերին և մեթոդներին: Ծնողական ժողովները կարող են կառուցվել տարբեր ձևերով: Մանկավարժական գիտելիքների հաղորդումը, կարող է արտահայտվել դասախոսության, զեկույցի, զրույցի, վեճի, քննարկման ձևով: Դա կարող է լինել սեմինար-դաս, ֆիլմի դիտում և քննարկում, խաղ ուսուցիչների և ծնողների միջև:

Կարելի է իրականացնել առանձին հոդվածների ընթերցում, մանկավարժական գրականության դասականների ստեղծագործություններից հատվածների ընտրանի, խնդրահարույց իրավիճակների ներկայացում: Այս տեխնիկան ակտիվացնում է լսարանը, խթանում է կարծիքների փոխանակումը, մանկավարժական ինքնակրթության ցանկությունը:

Ուսուցիչների և ծնողների միջև փոխգործակցության ակտիվ ձևերը կարող են լինել փորձի փոխանակման կոնֆերանսները, հարցուպատասխանի երեկոները, բանավեճերը, հանդիպումները ուսուցիչների, վարչակազմի, մասնագետների / բժիշկների, հոգեբանների, սոցիալական աշխատողների հետ և այլն:

Ուսուցիչը նպատակաուղղված աշխատանք է տանում երեխաների և նրանց ծնողների միջև փոխհարաբերությունների ձևավորման ուղղությամբ, ստեղծում է իրավիճակներ ծնողների նկատմամբ երեխաների հարգալից վերաբերմունքը դաստիարակելու համար:

Ապացուցված է, որ կրթությունը ոչ միայն մարդու զարգացման, այլև ազգային գոյատևման, ինքնության ու մարդկային առաջընթացի գրավականն է: Այն անձի ձևավորման հիմնաքարն է և իր հետևից տանում է հասարակության զարգացումը, ուստի պետք է մաքսիմալ ծրագրավորված ու նպատակային մոտենալ երեխայի դաստիարակության կարևոր գործի հետ կապված յուրաքանչյուր մանրուքի:

Սոցիոլոգիական հարցման արդյունքների ամփոփում և վերլուծություն

Սոցիոլոգիական հարցումը կատարվել է 2 եղանակով՝ բանավոր և համացանցային բաց հարցման միջոցով: Հարցմանը մասնակցել են ուսուցիչներ և ծնողներ: Ընդհանուր ուսուցիչների քանակը կազմել է 15 հոգի:

Հարցման արդյունքներն այսպիսին են՝

Ի՞նչ ձևեր և մեթոդներ եք կիրառում ընտանիք-դպրոց համագործակցության գործում:



Ծնողական ժողովներ-50% Անհատական խորհրդատվու թյուն-40% Ծնողավարման ձևերի ծանոթացում -10%

Հարցվողների մեծամասնությունը գտնում է, որ ընտանիք-դպրոց համագործակցությունը պետք է տեղի ունենա ծնողների հետ պարբերաբար հանդիպումների և ուսումնադաստիարակչական գործընթացի դիտարկման, դրա խթանման գործիքակազմի միջոցով: Կապի միջոցով ծնողներին իրազեկվում են դպրոցում տեղի ունեցող փոփոխությունների, ուսումնական նոր ծրագրերի մասին: Փոխադարձ խորհրդատվությամբ և պարբերական հանդիպումների միջոցով հնարավորություն է ստեղծվում խնդիրների բարձրացման և տրամաբանական լուծման ուղիների բացահայտման համար:

Ի՞նչ խնդիրների եք բախվում ընտանիքների հետ համագործակցելիս: Խնդիրներ



Անտեղյակություն - 30%

Սոցիալական և բարոյահոգեբանական - 45% Դասերի ճիշտ կազմակերպում տանը - 20% Յուրովի/տարբեր - 5%

Հարցվողները տվել են առաջացող խնդիրների հետ կպված տարբեր պատասխաններ, որոնք ներառում են հետևյալը.

Անտեղյակություն, ինֆորմացիայի ոչ ճիշտ ընկալում,

Սոցիալական եւ բարոյահոգեբանական խնդիրներ

Տանը դասերի ճիշտ և հստակ կազմակերպման հետ կպված խնդիրներ

Տարբեր ընտանիքներին հատուկ յուրովի խնդիրներ, որոնց պետք է մոտենալ հնարավորինս ուշադիր և զգույշ՝ չվիրավորելու ընտանիքի ինքնասիրությունը:

Ըստ Ձեզ ինչպե՞ս է ազդում ուսուցիչ-ծնող կապը դպրոցականի դաստիարակության վրա:



Ազդեցություն. Դրական - 100% Բացասական - 0%

Բոլոր հարցվողները դրական պատասխան են տվել հետևյալ հարցին.

դպրոցականի դաստիրակության գործում ուսուցիչ- ծնող կապը կարևոր է,

ուսուցիչ- ծնող կապը ունի դրական և դինամիկ զարգացում, եթե հիմնված է առողջ տրամաբանության վրա՝ հօգուտ երեխայի,

երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն։ Սա օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին,

որքան ծնողը իրազեկված է երեխայի դպրոցական առօրյայից, այնքան երեխան ավելի զգոն է թե՛ դասապատրաստման և թե՛ պահվածքի հարցում,

եթե դպրոցականը կապված է ուսուցչի հետ՝ տրված հանձնարարություններն էլ ավելի պարտաճանաչ է կատարում։

Որո՞նք են ուսուցիչ-ծնող համագործակցության համար կարևոր գործոնները



Գործոններ

Անմիջական շփում - 30%

Ընդհանուր կարծիք - 40%

Հետևողականու թյուն - 15%

Հարգանքը միմյանց նկատմամբ - 15%

Մանկավարժները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վետաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորում և մշակում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այս երկու որակներն էլ խիստ անհրաժեշտ են:

Այստեղ հարցվողները կարևորել են մի քանի գործոն: Դրանք են.

պարզ, անմիջական շփումը և ինֆորմացիայի հասանելի տրամադրումը,

միևնույն խնդիրների նկատմամբ ընդհանուր կարծիքին եզրահանգելը,

մշտական կապը և հետևողական լինելը,

հարգանք միմյանց նկատմամբ,

փոխադարձ վստահությունը և կրթական չափորոշիչների պահանջների նկատմամբ ընդհանուր մոտեցումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով ուսումնասիրելով ընտանիք և դպրոց համագործակցության երկու տարբեր տիպային մոդելներ,եկանք այն եզրահանգման,որ երեխայի դաստիարակության և զարգացման գործում մեծ դեր են խաղում ինչպես ընտանիքը այնպես էլ դպրոցը: Ընտանիքում է տեղի ունենում երեխայի սոցիալականացումը,առաջին հերթին ընտանիքն է հոգ տանում երեխայի կարիքների մասին կրթում և դաստիարակում նրան, ուստի երեխայի դատտիարակությունը ավելի արդյունավետ կլինի դպրոց և ընտանիք, ծնող և ուսուցիչ համագործակցության ժամանակ: Ծնողների հետ համագործակցությունը թույլ է տալիս ուսուցչին ավելի լավ ճանաչել երեխային,իմանալ նրա նախասիրությունների մասին,որը թույլ է տալիս պատկերացում կազմել երեխայի ներաշխարհի մասին: Ինչպես ծնողները այնպես էլ ուսուցիչները համարվում են երեխայի դաստիարակները և երեխայի դաստիարակությունն ավելի արդյունավետ կլինի ուսուցիչ և ծնող կայուն փոխհարաբերությունների ժամանակ, քանի որ մի շարք կրթական խնդիրներ լուծելիս ուսուցիչները անհրաժեշտ խորհուրդներ են ստանում ծնողներից, և հակառակը: Այսօր շատ ծնողներ սոցիալական տարբեր խնդիրների պատճառներով չեն մասնակցում իրենց երեխաների դպրոցական գործունեությանը, թողնելով երեխայի դաստիարակությունը ուսուցիչների վրա, որի ընթացքում նվազում է երեխայի հետաքրքրությունները դեպի գիտելիքը :

Ուստի կարող ենք ասել,որ ուսումնական գործընթացի հաջողությունը կախված է նրանից թե ինչպես է զարգանում հարաբերությունները ուսուցիչների, աշակերտների և ծնողների միջև:

Առաջարկում ենք փոխգործակցության կոլեկտիվի, խմբային և անհատական ձևերի համադրություն: Ժամանակակից պայմաններում դպրոցի դերը ծնողների և ուսուցիչների ջանքերը համակարգել է երեխայի դաստիարակության գործում: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը բարձրացնելու համար առաջարկում ենք հաճախ կազմակերպել ծնողական շաբաթներ, որոնց ժամանակ յուրաքանչյուր ծնող պետք է գտնի իր խնդրի սպառիչ պատասխանը,արտահայտի իր կարծիքը, ցանկությունը, խնդրանքը:

ԱՄՓՈՓՈՒՄ

<< Մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակությունը մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակությունը՝մեր ապագա վիշտը, մեր արտասուքները, դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ երկրի առջև>>:Ուրեմն կարողանանք ձևավորել կյանքի լայն իմացություն և տաղանդ , կարողանանք ճիշտ դաստիարակության միջոցով դաստիարակել ու կերտել երկրի , ինչու չէ նաև աշխարհի ապագա պատմությունը: Ա. Ս. Մակարեն

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Զաղոյան Ա. Մ., Խորհրդատվության դաստիարակչական դերը սովորողների պահվածքի ձեվավորման գործում/ Մանկավարժություն N 1 ՀՅԴ 373 Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, 2014:
2. Հարությունյան Գ., իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Ե., 2003:
3. Մանկության հիմնախնդիրները ժամանակակից հայ ընտանիքում, 21-րդ դարի

   մարտահրավերները, կանխման և հաղթահարման ուղիները, գիտաժողովի նյութերի ժողովածու, <<Մանկավարժ>> հրատ., Ե., 2016:

4. Ասատրյան Ա.Ա., Դպրոցամուտը՝ սոցիալական նոր միջավայրին երեխայի

   հարմարվելու կենսափուլ, Մանկավարժություն, 2011, հմ. 7:

5. ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա, հոդված 19,

   http://www.parliament.am/library/MAKkonvencianer/10.pdf hասանելի է:

6. https://www.dasaran.am/today/index hասանելի է:
7. Ярлыкова А.Л. Современные формы и методы педагогического взаимодействия школы и семьи учащегося начальных клас